

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴՍԱՐԱՆԻ**

**ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՌԱՅՎ ԻՆՏԵՐԹԵՅԴ» ՍՊԸ-Ի ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԱՐԲԻՏՐԱԺԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 36-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ» ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը, քննության առնելով «Ռայվ Ինտերթեյդ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով կարճելու վերաբերյալ գործով զեկուցողի առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Դիմողը Սահմանադրական դատարան ներկայացրած իր դիմումում խնդրել է «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի 2-րդ մասը ճանաչել Սահմանադրության 1-ին հոդվածին, 3-րդ հոդվածի 2-րդ մասին, 28-րդ հոդվածին, 29-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող:

Ըստ դիմողի՝ վիճարկվող դրույթում առկա է իրավական անորոշություն, ինչը փաստարկվում է նրանով, որ Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքը հանդիսանում է արբիտրաժային տրիբունալի վճիռը ճանաչելու միջնորդության վերաբերյալ գործի կասեցման՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք, քանի որ առկա է քաղաքացիական դատավարության կարգով քննվող այլ գործ, ինչն անհնարին է դարձնում արբիտրաժային տրիբունալի

վճիռը պարտադիր ճանաչելու միջնորդության վերաբերյալ գործի քննությունը: Մինչդեռ, ըստ հիշատակված իրավակարգավորման, Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքը գործի վարույթը կասեցնելու հիմք չէ, այլ, մի կողմից, արբիտրաժային տրիբունալի վճիռը ճանաչելու որոշման կայացումը հետաձգելու հիմք է, իսկ մյուս կողմից՝ Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով արբիտրաժային տրիբունալի վճիռը ճանաչելու որոշման կայացման հետաձգումը վերապահված է դատարանի հայեցողությամբ:

Դիմող կողմը նշում է նաև, որ՝ «Տվյալ դեպքում իրավակիրառ պրակտիկայում այդ «բացը» (երկու գործողությունների միաժամանակյա քննարկում) անհամապատասխանություն է ստեղծում դատարանի կողմից չեղարկման դիմումի քննության և զուգահեռ վճիռը ճանաչելու և կատարողական թերթ տրամադրելու միջև, քանի որ ստացվում է, որ մի դեպքում դատարանը քննում է վճռի օրինականությունը, մեկ այլ դեպքում մինչ վճռի օրինականության հարցի վերաբերյալ վերջնական լուծումը դատարանը կայացնում է դատական ակտ»:

2. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը, ինչպես նաև դիմողի նկատմամբ կայացված դատական ակտերի՝ այդ դատական ակտերի կայացման ժամանակագրության, դրանց հիմքում դրված պատճառաբանությունների ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ գործնականում թեև վիճարկվող դրույթը դատարանների հայեցողություն է վերապահել, սակայն դատարանները չեն օգտվել այդ հայեցողությունից և զուգահեռ չեն քննել ներկայացված դիմումներն ու միջնորդությունները, այլ, ընդհակառակը, այն դատարանը, որտեղ ներկայացվել է արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ միջնորդություն, հետաձգել է իր կողմից որոշման կայացումը:

Այնուհետև, արբիտրաժային վճիռը չեղյալ ճանաչելու վերաբերյալ միջնորդության հարցով դատարանի որոշումը կայացվել է մեկ այլ դատարանի կողմից վճռի ճանաչման և հարկադիր կատարման վերաբերյալ համապատասխան որոշումը կայացնելուց հետո միայն:

Տվյալ իրավիճակում կոնկրետ անձի նկատմամբ առկա չի եղել նույն հարցի վերաբերյալ գուգահեռ դատական քննության գործընթաց, հետևաբար՝ դատարանները միմյանցից անկախ գործընթացներ չեն իրականացրել:

Այսպիսով, սույն գործի շրջանակում փաստական հանգամանքների համակարգային վերլուծության արդյունքներից ելնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ առկա չէ դատարանների հայեցողական լիազորության պատճառով մարդու՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման դեպք, ինչը նշանակում է, որ դիմումն **ակնհայտ անհիմն է:**

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝ ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը, բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, գ) երբ վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Միաժամանակ, նույն օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ «Սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր»:

Այնուհետև, նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է, որ՝ «Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում»: Իսկ նույն օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով

նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն **ակնհայտ անհիմն է**, կամ դիմողը չի սպառել դատական պաշտպանության բոլոր միջոցները, կամ լրացել է Սահմանադրական դատարան դիմելու համար սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված վեցամսյա ժամկետը»:

Հաշվի առնելով հիշյալ իրավակարգավորումների պահանջները, ինչպես նաև այն հանգամանքը, որ դիմումում չի հիմնավորվում դիմող կողմի հիմնական իրավունքների և ազատությունների ենթադրյալ խախտման վերաբերյալ սահմանադրաիրավական վեճի առկայությունը, ուստի այդ հիմնավորմամբ պայմանավորված՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակում ներկայացված անհատական դիմումն **ակնհայտ անհիմն է**, իսկ գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 69-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

«Ռայվ Ինտերթրեյդ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՆԱԽԱԳԱՀ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

10 ապրիլի 2018 թվականի  
ՍԴԱՌ-30